

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՆԻԿՆԱՅԻՆ ԱԴԱՄԱՆԴԻ.— Նիւ-Եօրկից փետրուարի 10-ին հեռագրում են „Daily Telegraph“-ին: «Այսօր Նիւ-Եօրկի Վան-կան դիտութեանց ամերիկական թանգարանում դիտուեցաւ մի աղամանդ, որ երկնքից ընկաւ երկրի վերայ: Այս աղամանդը տեղաւորուած է Արիզօնում գտնուած 40 ֆունտանոց մէտէօրի վերայ: Հետազօտութիւնները ցոյց տուին, որ դա իսկական աղամանդ է: Աղամանդը պատող երկաթի մեջ պրօիլիտի ու դօբրիլիտի գոյութիւնը ապացուցանում են, որ այդ մէտէօրիտը—արհեստական չէ. այսինքն երկրային չէ, այլ իսկապէս երկնային ծագում ունի: (НОВ М.)

ԳԱՃԻ ՓՈՇԻ ՆԻ ՏՈՒԲՆԵՐԿՈՒԼԵՕԶ.— Գաճային արտադրութեան գերմանական դաշնակցութեան վերջին ժողովներից մէկում յայտարարուած էր գաճի բարեբեր ազդեցութեան մասին թոքերի տուբերկուլեօզի դէմ. դործարանատէրերից մէկը, որ ներկայ էր այդ ժողովին, յայտնել է թէ մի տարուայ ընթացքում նկատել է, որ գաճային գործարանի բանուորներից ոչ միւնը չէ հիւանդացել տուբերկուլեօզով, ընդհակառակը գիտել է, որ այդ հիւանդութիւնն ունեցողի դրութիւնը թեթեացել է և մինչև անգամ հիւանդութիւնը դադարել: Հարցում գաճի բարեբեր ազդեցութիւնը տուբերկուլեօզի վերայ հաստատուած է երկարամեայ փորձերով: Վէյսէնբուրգը համարւում է բուժարան թոքախտների, որոնց առողջանալը վերագրւում է այն ջերմուկի ազդեցութեան, որ շատ գաճ է պարունակում իւր մէջ (Н. М.):

ՆՈՐ ՄԻՋՈՑ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ: Անցեալներն Աստարալիայում պատահաբար գտնուեցաւ քաղցկեղի դեղը: Մակայում տեղական չաքարի անդերի կենտրոնում, մի գերմանացի բանուոր, որ տանջուած էր քաղցկեղից, պատահմամբ մի փոքր մէլլաս խմեց—այսպէս է կոչւում այն օշարակը, որ նստում է չաքարը պատրաստելու ժամանակ և զգուշիկ համ ունի, մէջը կալի, բորակ, քլոր, բարիտ և այլ աղեր պարունակելու պատճառով, որի համար և անպէտք է խմելու համար: Բայց մէլլասը

բաւորովին անսպասելի ազդեցութիւն ունեցաւ հիւանդի վերայ: Քաղցկեղի ուռոյցը վզի վերայ զգալի կերպով պակասեց: Յետագայ փորձերի ժամանակ մէլլասի ներգործութիւնը նոյնպիսի բարեյաջող հետեանք ունեցաւ (НОВ. ОБ.):

ՄԻԱԳԻՄ ԵՐԱՍԹՈՒՂԻ, Անցեալ տարի անգլիական պարլամենտին ներկայացուեց մի ծրագիր միագիծ երկաթուղու Լիվէրպուլից մինչև Մանչեստր: Գնացքները ժամում պիտի անցնէին 175 քիլոմետր մի կենդրոնական ընթիւ վերայ Լարտիգի սիստէմով: Այս սիստէմն այն առաւելութիւնն ունի, որ դորաւնով գրեթէ ամենին հնար չկայ գնացքի գծից դուրս գալու, մինչև անգամ ամենաարագ գնալու ժամանակ: Սակայն քանի մի պատճառներով ծրագիրը յետաձգուեց: Լարտիգի սիստէմով արդէն իրլանդիայում Լիստովէլ քաղաքը միացած է ծովագրեայ գեղեցիկ պուսկա Բալլիքիւննիօնի հետ: Բացի մի գլխաւոր բեւսից՝ կրկու օգնական ընթեր էլ ունի նա, միայն նորա համար, որ վագօնների կէսերի մէջ հաւասարակշռութիւնը պահպանէ: Կենդրոնական ընթեր ամբացած է հիմքերի վերայ A տառի ձեւով: Յաւելուած ընթերները նոյն հիմքերի վերայ են ամբացած գլխաւոր ընթերի զուգահեռաբար և գետնից $\frac{3}{4}$ մետր բարձրութեամբ: Շոգեմեքենան բաղկացած է երկու միատեսակ մեքենաներից, մէկը միւսին միացած: Ամեն մէկ մեքենան իւր կաթսան ունի, իւր վառարանը և իւր ծխնելոյզը: Կաթսաները միմեանց հետ միացած են, ջրի մակերևոյթն ու ճնշումը հաւասար պահելու համար: Շոգեմեքենայի մօտ երեք գլխաւոր ակը կայ, որոնցից մէկը հանգչում է կենդրոնական ընթիւ վերայ: Չորս ուրիշ ակը մանր ակներ յենուում են յաւելուած ընթերներին: Երկրորդ տեսակի ակները ծառայում են հաւասարակշռութիւնը պահպանելու համար: Ընթանալու ժամանակ նոքա դործ չեն կատարում վագօնները ջուխտակ են շինուած: Ամեն մի վագօն 12 ճանապարհորդի համար է: Առանձին ձևի օանդուխով կարելի է աջ կիսից ձախը բարձրանալ և կամ հակառակը: Ամեն մի վագօն չորս ակն ունի: Արագութիւնը 30 քիլոմետր է ժամում, բայց շոգեմեքենաներն ընդունակ են 240 տօնն ծանրութեամբ գնացք շարժել, 49 քիլոմետր արագութեամբ: (H. M.):

ԹՈՒՓԱՅՏԻ ՆՈՐԱԳԻՒՅ ԴԵՂ, „Փրանսիական Միջազգային բժշկականութիւն“ լրագրում տպուած է մի յուզիչ տեղեկութիւն տուրքերկուեօղի դէմ խիստ յուսալի միջոց գտնելու մասին: «Թոքախտի դէմ միջոց գտնուած է», ասում է լրագիրը և փորձերն արուած են արդէն: Այս դէպքը ահագին նշանակութիւն ունի, որ անհրաժեշտ է անցնել վշտակիր մարդկութեան պատմութեան մէջ: Այդ նոր միջոցը գտաւ Փրանցիսկ Կրօտտը: Նա գտաւ տուրքերկուեօղի գիտնականապէս բժշկելու միջոցը ելեքտրականութեան բարձր հոսանքով: Ելեքտրականութիւնը ոչ միայն սպանում է այդ հիւանդութեան բացիլները, այլ և ծառայում է որպէս գործիք՝ հիւսուածների միջոցով հա-

կանխական ուժեղ դեղեր ներմուծելու, ինչպէս իօդ և ֆորմօլ, 1900-ի Փարիզի բժշկական կօնգրեսում և տուբերկուլիօզի դէմ կռուելու լօնդօնեան կօնգրեսում ֆ. Կրօտտի հիմնած զանազան ինստիտուտի բժիշկները և մասնաւորապէս Նիւ-Սօրկի բժշկական ընկերութեան երկու պրօֆէսօր-պատգամաւորներ ղեկուցումներ արին այն գերազանց հետաւեցնելի մասին, որ նորա հասել են յիշեալ ձևով տուբերկուլիօզը բուժելիս: Այդ բժշկների ժողոված վիճակագրական տեղեկութիւններ զանազան ազգութեանց և դասակարգերի հազար հիւանդների վերաբերմամբ, ասում են, որ բոլորովին առողջացողների տոկոսը 70-ի է հասնում: Անցեալ տարի Կրօտտը Փարիզում մի ինստիտուտ հիմնեց թղթախտներին բժշկելու (Նիւ-Սօրկի, Բրիւսսէլի, Լիեժի և իցցայի օրինակով): Այստեղ 3000 հիւանդներ էին բժշկուում, և ինստիտուտի բժիշկները նկատեցին մահուան դատաւիճիւրը առած հիւանդների հրաշալի բժշկութեան դէպքեր: Պէտք է նկատել բացի դորանից, որ կազմուածքի մէջ հիւսուածքների միջոցով հիւանդութեամբ խոթացած տեղերը կիւքարականութեամբ դեղ ներմուծելու եղանակը գործ է դրւում ոչ թէ միայն տուբերկուլիօզի համար, այլ գորա օգնութեամբ բժշկուում են արդէն մի քանի ուռուցքներ, նեարդային հիւանդութիւններ և հնացած բեկմատիզմ: Մի կոյր, որ իւր տեսութիւնը կորցրել էր 16 տարի առաջ, Ֆիէզալ բժշկի վկայութեամբ սկսաւ տեսնել, Կրօտտի եղանակով բժշկութեան շնորհիւ: (HOB. M.)

ԽՈՒՆԵՐԻ ԼՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔ. Ամերիկացի երիտաւարդ բժիշկ Գէտչենսօնը գտել է մի գործիք, որ խողովութիւն է տալիս խուլներին: Այս գործիքը հնարելու վերայ նա 10 տարի աշխատել է: Սա կոչւում է «ակուստիկոն» և հազւում է ականջին: Ակուստիկօնը պարզ հաղորդում է ձայները, եթէ խողովեան նեարդը բոլորովին ծիրուած չէ: Նիւ-Սօրկի ինստիտուտում կատարուած փորձերը փայլուն հետաւեցնել են տուել: Խուլներն ուրախութիւնից լաց էին լինում, երբ լսում էին վաղուց չլսած ձայները: Փորձերին ներկայ գտնուող Նիւ-Կէստլի դուքսը տեղն ու տեղը հանգանակութիւն բաց արեց բոլոր աղքատ խելքին բաժանելու այս գործիքից:

ԹՈՒՔԱՆՏԻ ԴԵՂԻ ԳԱՂՏՆԻՔԸ. Որովհետև լրագիրներում հրատարակուեց, որ ամերիկացի միլիթանտէր Ռօկֆէլլէրը 7 միլիօն դօլար մրցանակ է նշանակել թղթախտի դէմ դեղ գտնողին, կուբանեան չրջանի Կորենովսկ աւանի բնակիչ Ֆէօօր Իգնատէնկօն այս օրերս գրաւոր առաջարկութեամբ դիմեց Չիկագօում միլիթանտիւրոյ, որ ինքը ամենահնացած թղթախտը կը բժշկէ խոտերի միջոցով մի ամսուայ ընթացքում: Սըբ հարց ու փորձ արին Իգնատէնկօին, և խնդրեցին այդ բուժիչ խոտի անունը տալ, նա մերժեց անունը տալ, որովհետև այդ իւր գաղտնիքն է և պատմեց, որ ինքը ջահիլ ժամանակ թղթախտ ունէր, բայց երբ տարան իրան գինուորական ծառայութեան, նորա հիւանդութիւնն այնպէս զարգացաւ, որ բժիշկները մա-

հացու համարեցին, բայց պատահաբար մի ծեր մարդ հաղորդել է իրան թոքախտի բժշկութեան գաղտնիքը և դորանով բոլորովին ազատուել է ախտից և այժմ բոլորովին առողջ է (ՋՋ. Է.):

ՐԱԳԻ ՄԵՏԱՂՆ ՈՒ ՆՈՐԱ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ: Ուրանային հանքում ֆրանսիացի դիտնականները մի նոր մետաղ գտան Բադի (ճառագայթ) անունով: Նլեքարօտեխնիքական ճեմարանում կատարած փորձերը Պ. Բուրգում ցոյց տուին, որ այս մետաղը հրաշալի յատկութիւններ ունի:

Նորա ներկայութեամբ հանդուժ է ելքարական լոյսը, թէպէտ ուրիշ պայմաններում, ուրիշ մարմիններին լոյս է տալիս: Այն սենեկում գտնուած ամեն մի առարկայ, ուր պահուած է լինում բադին, լոյս է տալիս կապոյտ փայլով: Այս լոյսը մարդկանց էլ է վարակում: Նոցա կաշին էլ է սկսում լոյս տալ: Բադիի հետազօտութիւնը, Մէնդէլէեւի, Նզօրով և Բօրգման պրօֆէսօրների մասնակցութեամբ, այն եզրակացութեան բերեց, որ դա կատարեալ յեղաշրջում պիտի գործէ գիտութեան մէջ: Լոյս այժմեան տեսութիւնը, որ ընդունուած էր իբրև եթերի տատանմունք, կեղծ է երևում: Լոյսը նիւթի արտացոլումն է, անթիւ էլէքտրոնների արտացոլում, որոնք սլանում են մի վայրկենում 150,000 քիլօմետր արագութեամբ: Որովհետև Բադիի աննշան քանակութիւնը դուրս է ցայտում միլլիարդ էլէքտրոններ, ուստի Բադին ներկայանում է որպէս հանդարտ, սառն մի լոյս: Կատարեալ յեղաշրջումն է սղասուում լուսաւորութեան նկատմամբ:

Ամենից առաջ Բադին օգտակար կլինի օդադնացների համար: Բադիի աննշան քանակութիւն պաշտպանում է կայծակից: Նա մի տեսակ շանթարգել է և ցրում է փոթորկի ամպերը: Նոյն դերն է կատարում Բադին և երկրի վերայ, Բադիով պաշտպանուած բնակարանները բոլորովին ազատ են կայծակի հարուածից:

Այժմ Բադին առասպելական գին ունի: Բայց մի քանի տարուց յետոյ կգտնուի հանքից հեշտ հանելու եղանակը: Մի ժամանակ ալիւմինն էլ թանկ էր, բայց այժմ անհամեմատ արժան է: Ամեն ինչ կախուած է հանքից դուրս հանելու պայմաններից:

Պարիզի հիւանդանոցում փորձեր արին, թէ ինչ ազդեցութիւն ունի Բադիի անտեսանելի ճառագայթները նեարդային հիւանդութիւնների վերայ և ամենալաւ հետեանքների հասան: Բադիի ճառագայթները բարեբեր ներգործութիւն ունեցան նեարդային համակարգութեան վերայ, մանաւանդ միլամադձոտների վերայ: Բադին ելքարացնում է հիւանդին:

Մի քանի բժիշկներ մտադիր են Բադիի ազդեցութիւնը փորձել պիսակութեան վերայ (Lupus): Հաւանական է, որ Բադին, Ֆինզէնի լոյսի նման, առողջացնում է նորան: Գուցէ և չարաբաստիկ քաղցկեղի վէրքերն էլ, որոնց ոչ մի դեղ չի

մօտենում, Բաղիի շնորհիւ կըռժուին: Այս մասին հաստատ փորձեր չեն եղել, բայց քանի մի ակնարկներ կան արդէն:

Տակաւին շատ հազուադէպ է Բաղին և 1 կիլօգրամը արժենում է 10,000,000 ռուբլի:

ՄՐՏԻ ԿԵՆՊԱՆԱՑ ԵՆԼԸ.— «Природа и жизнь» ամսագրում տպուած էր պրօֆ. Ա. Կուլեաբկօի հետաքրքրական յօդուածը սրտի կենդանացման փորձերի մասին: Այս խնդիրը բուռն հետաքրքրութիւն գարթեցրեց հասարակութեան մէջ և մենք իւր ժամանակին նկարագրեցինք պրօֆ. Կուլեաբկօի բացատրութիւնները:

Դեռ անցեալ տարի 80-ական թուականներին ամերիկացի պրօֆ. Ն. Մարտինը և գրեթէ միաժամանակ, բայց բոլորովին անկախ նորանից, ռուս գիտնական բնախօս պրօֆ. Ի. Պաւլովը, մշակեցին սրտի գործունէութեան դիտողութեան եղանակը կենդանիների վերայ, որից՝ երևեցաւ, որ մնացեալ մարմնի կապակցութիւնից անջատուած սիրտը շարունակուած էր կրծկուել շատ երկար ժամանակ, իւր իսկ անօթներից դուրս մըղուող սեպական անջատումներով: Մի փոքր յետոյ, 1895 թ. գերմանացի գիտնական պրօֆ. Օ. Լանդէնգորֆը հնար գտաւ դուրս կտրած արիւնով լի սրտի գործունէութիւնը վերականգնել յօրինուածքից դուրս արհեստապէս արիւն մատակարարելու եղանակով 1901 թուին անգլիացի բժշկապետ Լօկլի հաղորդեց՝ սրտի արհեստապէս սննդելու նոր եղանակի մասին: Լօկլիը պատրաստեց արհեստական մի խառնուրդ, որ ճագարի դուրս կտրած սրտի գործունէութիւնը կարող է պահպանել շատ ժամեր շարունակ: Լօկլի հեղուկը, որ աղային մի լուծուածք է, մօտ է արեան չիճուկի հանքային բաղադրութեան, իսկ գործարանաւոր նիւթերից միջի բաղադրութիւն կազմող միայն գինէշաքարը ($1/10\%$), ոչնչով պակաս չէ արիւնից:

Հէնց Լօկլի հեղուկի օգնութեամբ պրօֆ. Կուլեաբկօն կատարեց իւր յայտնի փորձերը սրտի գործունէութեան կենդանացման վերաբերմամբ:

Տիրող հայեացքներին համաձայն, յօրինուածքի բնական մահուան ժամանակ, զանազան հիւանդութիւններից հանդիպող մահուանը, տեղի է ունենում բոլոր հիւսուածների ու գործարանների աստիճանաբար նուաղումն ու մահացումը, և եթէ այդ միջոցին մի քանի գործարանների մահացումը մի փոքր ուշանում է, այն ժամանակ յամենայն դէպս կարելի էր կարծել, որ այսպիսի ուշանալը շատ երկարատեւ լինել չէ կարող: Այնուամենայնիւ, սրտի արտասովոր դիմացկունութիւնը զանազան վնասակար ազդեցութիւնների առջև, նոյնպէս և մի քանի առանձին մտածութիւններ դրդեցին ինչ քանի մի փորձեր կատարել ոչ սպանուած, այլ որևէ հիւանդութեամբ մեռած կենդանիների սրտի կենդանացման, որի համար էլ օգտուել եմ առաջին դէպքից:

Այս փորձը կատարուեց էգ ճագարի վերայ, որ ծանր հի-

աւանդութիւնից յետոյ սատակեց (թուութիւնից, ցնցումներէից, լուծողութիւնից)։ Կենդանին մեռած դտնուեցաւ փայտացման սկզբնական նշաններով յունիս 5-ին երեկ. 8 ժամին մօտ։

Յունիսի 6-ին, կէսօրի 12 ժամին մօտ, բոլորովին փայտացած դիակից դուրս կտրուեց սիրտը, որ արեան կոշտերով լիքն էր, բայց բուն սրտի մկանները փայտացման նշաններ չունէին դեռ։

Սիրտը տեղաւորուեց գործիքի մէջ և աւագ զարկերակում այնդացրած եղեգնիկի միջոցով լօկկի հեղուկը անցկացուեց։ Հեղուկն անցկացնելուց յետոյ մօտ մի ըսպէ անց, անամէջ երակների մօտ և նախասրտի հարևան մասերում սկսուեցան խիստ անկարգ ալիքաձև կծկումներ, որոնք ապա փոքր առ փոքր փոխուեցան չափական կծկման, սկզբում խիստ թոյլ ու անկանոն։ Հեղանիւթի հոսանքը կէս ժամով դադարեցրինք։ Նորք նորից սկսեցինք, անմիջապէս սկսուեցան նախասրտի և սրտախորշերի կանոնաւոր, բաւական ուժեղ կծկումներ։ Փորձը տևեց մինչև ցերեկուայ 3¹/₂ ժամը, իսկ այնուհետև սիրտը եղեգնիկով սառցարան տարուեց։

Այս սրտի կծկումը նորոգուեց կենդանու մահից 1/2 ժամ յետոյ անգամ։

Այսպիսով այս փորձում յաջողեց մեռած սիրտը կենդանացնել։

Հետագայ փորձերի ժամանակ կենդանացնելը յաջողեց աւելի հեռաւոր ժամանակամիջոցներում։ Մի դիպուածում սիրտը կծկուեց կենդանու մահուան ութերորդ օրը կատարած փորձին։

Այս դիտողութիւններն առանձնապէս կարևոր նշանակութիւն ունեցան իմ ապագայ հետազոտութիւնների համար։ Փորքիկ յոյս նշմարուեց և մեռած մարդկանց սրտերի նկատմամբ նոյն հետևանքի հասնելու, ինչին որ կարելի եղաւ հասնել սատակած կենդանիների սրտերի համար։ Իրաւոր, առաջին իսկ փորձերից յետոյ ինձ յաջողեց անցեալ տարուայ օգոստոս ամսին դուրս կոչել մի սրտի զարկի նորոգումը, որ դուրս էի կտրել հեռամետայ մանկան դիակից նորա թոքատապից տեղի ունեցած մահուան երկրորդ օրը։ Սիրտը առանց առանձին նախազգուշութիւնների տարուեց գործանոցը և նորա անօթներով սովորական եղանակով ներարկուեց նոյն լօկկի հեղուկը, որ գործ էր դրուել և ճագարի սրտի վերայ։ Նրկար ժամանակ—մօտ կէս ժամ—սիրտը բոլորովին անշարժ մնաց։ Այդ ժամանակից յետոյ միայն, երբ ես ուզում էի արդէն փորձը դադարեցնել, սկսուեց նախասրտի թոյլ, ուշուշ կրկնուող և դանդաղ կծկումն, իսկ զարձեալ մի քանի ժամանակից յետոյ, սկսեց զարկել և ամբողջ սիրտը։ Զարկելը մի ժամից աւելի տևեց։

Մինչև այս փորձը դեռ ոչ ոքի չէր յաջողել իրանց մահով մեռած մարդկանց դիակներից վերցրած սրտերը կենդանացնել կամ նորոգել սրտի ինքնուրոյն կծկումները, Նախկին դի-

ստորութիւնները վերաբերում են գլխատուածներին սրտերին և այդ-
 ժամանակ նոցա գործունէութեան վերականգնումը ստացւում էր
 գլխատուածից յետոյ միայն մի կարճ միջոց, մի ժամից ոչ աւելի:
 Ինչ նշանակութիւն կարող են ունենալ այս տեսակ փորձերը:
 Շատերը հակուած են մտածելու, որ իմ դորժ դրած հե-
 ղուկը՝ մի տեսակ կենդանարար էլիքսիր է, որ եթէ նա ըն-
 դունակ է սրտին կենդանութիւն տալ, կարելի է այն գործ-
 դնել և ամբողջ մարմինը կենդանացնելու համար: Սա համո-
 զուած եմ, սակայն, որ այսպիսի եղբակացութիւնը հիմնուած
 է թիւրիմացութեան վերայ: Լօկկի հեղուկը ոչինչ կենդանաց-
 նող բան չէ պարունակում (բացի թթուածնից), և դեռ մարմնի
 բոլոր գործարաններն էլ չեն ներկայացնում միատեսակ յար-
 մար պայմաններ կենդանացման համար: Մի դուրս կտրած գոր-
 ծարանի գործունէութեան նորոգումը և ամբողջ մարմնի կեն-
 դանացումը դեռ շատ հեռու են մէկմէկուց:

Այնուամենայնիւ, իմ փորձերի անսպասելի հետևանք-
 ները ապացուցեցին, որ տաքարիւն հիւսուածներին կենսակա-
 նութիւնն ենթադրածից աւելի մեծ է, և ցանկալի էր կենդա-
 նացման պայմանների առաւել մանրամասն ուսումնասիրու-
 թիւն: Սակայն նախ քան ամբողջ յօրինուածքի կենդանացման
 փորձերին դիմելը, անհրաժեշտ է զգուշութեամբ բարձր կար-
 գի կենդանիների մարմնի գործարաններն ու հիւսուածքներն
 ուսումնասիրել: Ամբողջ յօրինուածքի կենդանացման խնդրում
 ահագին նշանակութիւն էր ներկայացնում մինչև այժմ կենդո-
 նական նեարդային համակարգութեան մեծզգայականութիւնը՝ ա-
 րեան չրջանի խանգարման վերաբերմամբ, նախկին դիտողութիւն-
 ների հիման վերայ ընդունուած էր մտածել, որ գլխի ու մէջքի ու-
 դեղի բջիջները մի քանի ընդէից աւելի չեն կարող արեան
 չրջանի ընդհատման ենթարկուել: Սակայն մենք տեսնում ենք,
 որ սիրտը, որի կենսականութիւնը առաջ ժամերով էր հաշոււմ,
 երևում է, որ կարող է իւր կեանքի ընդունակութիւնը պահ-
 պանել ամբողջ օրերով: Բնական հետեութիւն է, որ նեարդա-
 յին համակարգութեան համար էլ, գուցէ, կենսականութեան
 այլ սահմաններ պէտք է գծել: գուցէ նորա կենդանացնելն ու
 վերանորոգութիւնն էլ հնարաւոր կլինի ոչ թէ միայն ընդհե-
 րից, այլ և ժամերից յետոյ, արեան չրջանի ժամանակաւոր դա-
 դարումից յետ:

Պէտք է կարծել, որ առհասարակ կենդանի մարմնի
 հիւսուածներին ու գործարաններին կենսականութեան սահման-
 ներն էլ պէտք է նշանաւոր կերպով ընդլայնուեն, իսկ այսպի-
 սի եղբակացութիւնը գործնական նշանակութիւնից զուրկ չէ:
 Դա մեզ ստիպում է բոլորովին այլ կերպ վերաբերուել այն-
 դէպքերին, օրինակ, կեղծ մահուան, և շարունակել կենդանաց-
 ման փորձեր անել աւելի մեծ ժամանակամիջոցների ընթաց-
 քում, քան արել են մինչև այժմ: (Тихомиров. II.)

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ